ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՒՈՅ
ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ,
ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ

ORDINARIATE
OF THE ARMENIAN CATHOLIC
CHURCH IN ARMENIA, GEORGIA, RUSSIA,
UKRAINE AND EASTERN EUROPE

ՀՀ, ք. Գիւմրի - 3104, Աթարբեկեան փող. 82, Հեռ. (+374 312) 52115, Էլ. փոստ՝ armorda@web.am / Atarbekyan str. 82, 3104 – Gyumri, RA, Tel.: (+374 312) 52115, E-mail: armorda@web.am
ՀՀ, ք. Երեւան – 0052, Թբիլիսեան խճուղի 1/3, Հեռ. (+374 10) 280577 / Tbilissian Avenue, side str. 1/3, 0052 - Yerevan, RA, Tel.: (+374 10) 280577

Դիվան, Վճռ. 155/Ա,19 դեկտեմբերի, 2024թ.

# ՎՃԻՌ ԱՆՎԱՆՄԱՆ

Հիմք ընդունելով Արևելյան Կաթողիկէ Եկեղեցիների կանոնագիրքը (Կանոններ 276-278) և ինձ վստահված առաջնորդական տարածքի հովվական կարիքները՝

Թբիլիսիի և Նոր Խուլգումոյի (Տամբովկայի) ժողովրդապետ Գերհ. Հ. Միքայել Ծ. Վրդ. Խաչկալյանին անվանում եմ **Վրաստանի Ավագերեց (Դեկան)**՝ երեք տարի ժամկետով և պահպանելով նրա ժողովրդապետական պաշտոնը: Այս անվանումը կատարելիս՝ ի նկատի եմ ունեցել Վրաստանի Հայ կաթողիկէ համայնքներում մեր սիրելի հոգևոր եղբոր դրվատանքի արժանի հովվական երկարամյա ծառայության փորձառությունը և գիտելիքները, որոնք, լիահույս եմ, որ կնպաստեն նրան վստահված այս նոր և հույժ կարևոր առաքելությանը:

Սրտագին աղոթքներս եմ վերառաքում դեպի Օրհնյալ Սուրբ Կույսը և նրա բարեխոսությամբ՝ առ Բարձրյալն Աստված հայցելով բոլոր աստվածային շնորհներն ու պարգևները մեր սիրելի եղբոր համար, որպեսզի կարողանա իր նոր պաշտոնը ստանձնել և կատարել առաքելական և հովվական եռանդով ի սպաս Հայ կաթողիկէ համայնքների հոգևոր աճման և ի փառս Աստծո:

† ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊՍ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
Տիտղոսաւոր Արքեպիսկոպոս Սեբաստիոյ Հայոց
Առաջնորդ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի
եւ Արեւելեան Եւրոպայի Կաթողիկէ Հայոց

ARMENIAN CATHOLIC CHURCH COMMUNITY OF ARMENIA
05513258
*ARMENIA* 1
05513258